Индустриализация Средней Азии

Сборник документов

9(47.925)
С-82

9(17.925)
Մ-82

31 AUG 2007
05 SEP 2011

ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՕՐԵԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գրեց՝

ԱԼ. ՄԱՐՏՈՒՆԻ

38

Հ.Ս.Ֆ.Հ. Հանրային Գրադարան
Հ.Ս.Ֆ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԸՆԿ. ԱԼ. ՄԱՐՏՈՒՆԻ

1924

Հրատարակութիւն «ԳԻՏ–ԴԱՍ» Հրատ. Ընկերութեան

„Git Das" P. O. Box 62, Mad. Sq. Sta.
New York City

ԳԻՆ՝ 20 ՍԷՆԹ

03 JUL 2013
Ն-82
13022

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Առանձին գրքոյկով հրատարակութեան տալով ընկեր Մարտունիի (Ալեքս. Մեսանիկեան) այս փոքրիկ, բայց նշանակալից գրութիւնը, մենք ուզէ կասկած չունինք թէ նախորդի պէս ջերմագին ընդունելութեան պիտի արժանանա: Ընկ. Մեսանիկեանի այս գրութիւնն ամբողջացումն է նախորդի, որ մենք հրատարակած ենք մէկ-երկու շաբաթ առաջ, «*Գաղութահայ Աշխատաւորութեան*» վերնագրին տակ:

Որոշ եւ մեկին կերպով, կենդանի լեզուով եւ անկեղծ շեշտով խորհրդային Հայաստանի մեր համբաւաւոր ընկերն իր տեսակէտները կպարզէ շատ մը հրատապ, առօրէական խնդիրներու վերաբերմամբ՝ *պատասխանատու* մարդու կատարեալ գիտակցութեամբ. այդ հանգամանքը գրքոյկին կընծայէ առանձին արժէք եւ նշանակութիւն. հոն արտայայտուած տեսակէտները սոսկ անհատական բնոյթ չունին, այլ եւ խորհրդային Հայաստանի վարիչներու տեսակտներն են ընդհանրապէս:

Կյուսանք շուտով ի վիճակի ըլլալ ուրիշ գրութիւն մը նոյն հեղինակի գրչէն տպագրութեան յանձնելու:

«ԳԻՏ-ԴԱՍ» Հրատ. Ընկերութիւն

00
87-ՄՀ

ԵՌԱՄԵԱ ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՕՐԵԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Երեք տարի: Սա մեծ ժամանակամիջոց է յեղափոխական պատմաշրջանի համար: Եւ այդ երեք տարուա ընթացքում գոնէ լուծուած է գլխաւոր խնդիրը: Հայաստանի խորհրդայնացումը, կարելի է համարձակօրէն ասել, վճռել է կամ վերացրել՝ այսպէս կոչուած՝ հայկական հարցը: Եւ նա մի բան էլ աւելի է արել:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Մենք շատ լաւ գիտենք, որ արտասահմանում պատսպարուած «մարտական կուսակցութեան» չարաբաստիկ գինակիրները պատրաստ են կոչելու. «Ո՛չ, հայկական հարցը կա, Թիւրքահայաստանի խնդիրը մնում է, իսկ Ռուսահայաստանը պէտք է որ աղատագրուի ռուսական լծից»: Սովորական պնդում, քանի որ այդ արւում է մարդկանց կողմից, որոնք ընդունակ չեն որեւէ հարց լուծելու, եւ որոնց կողքով ծանրակշիռ խնդիրներն անցնում-գնում են եւ վճռւում պատմութեան անողոք լոգիկայի հարւածների տակ: Եւ Հայաստանում ապրողն ու շրջագայողը տեսնում է թէ ինչ ապահով օրեր է ապրում այդ երկրի չարատանջ աշխատաւորը, որի համար մի հարց է մնացել միայն՝ բարեփոխել իր նիստն ու կացը, միանգամայն բարելաւել իր տնտեսութիւնն ու կենցաղը: Մենք սովորութիւն չունենք դիմելու բուրժուաների կողմից մեր հասցէին ուղղուած բարենպաստ վկայութիւններին. դա «մարտական կուսակցութեան» փեշակն է, եւ հէնց այդ պատճառով էլ այստեղ ընդգծում ենք այն, ինչ մեզ ասաց նորերս Հայաստանից արտասահման վերադարձող հայ խոշոր կապիտալիստներից մէկը՝ Կարիկեան: Վերջինս գտնում է, որ Հայաստանն արդէն թեւակոխել է երջանկութեան դարաշրջանը: Ինչու՞ է նա այդպէս խօսում: Այն հասարակ ու պարզ պատճառով, որ նա տեսել է մեր Հայաստանը:

14155

Տաճկահայաստանի խնդի՞ր։ Այդ էլ է լուծված։ Նորից կհայհոյեն մեզ դաշնակցականները։ Այո՛, նա լուծված է եւ նրա դատավճիռը կհանուի մօտակա տարիներում, քանի որ Տաճկաստանի դրութիւնն այս յեղափոխական էպոխայում վերջնականապէս կորոշուի։ Մերձաւոր Արեւելքի դռան շեմքին կանգնած Խորհրդային Կովկասն արդէն կանխորոշում է արեւելեան ժողովուրդների եւ Մերձաւոր Արեւելքի բախտը։ Մեզ համար գոյութիւն չունի եւ սահմանների հարցը, որովհետեւ ժողովուրդներ եւ երկրներ յեղափոխականացնող խորհրդային իրաւակարգն այս դէպքում թերեւս համաձայն լինի հայկական հինաւուրց ասացուածքին թէ՝ «սահման քաջաց—զէնն իւրեանց», քանի որ նրա գաղափարները համատարած են։

«ԹԻՒՐՔԱԿԱՆ ՎՏԱՆԳԸ»

Բայց կա եւ մնում է «Թիւրքական վտանգը»։ Այդ մասին էլ են խօսում մեր ազգայնականները։ Այդ բանին հակամետ են հաւատալու նաեւ Հայաստանի ազգաբնակչութեան որոշ խաւերը։ Ամենայն պատասխանատուութեամբ եւ վստահութեամբ մենք պնդում ենք, որ այդ «վտանգը» չկա, նոյնիսկ չնայած Երեւանեան այն «միջադէպին», որի առիթով Պօլսի Թրքական ու հայկական դեղին ու սպիտակ մամուլն այնքան թմբուկ զարկեց վերջին ժամանակները։ Եթէ մի խիստ աննշան դէպք, որի նմանները շատ-շատ են այս յեղափոխական օրերին, այն էլ խորհրդային երկրների այսպէս ասած միջազգային պրակտիկայում, մի դէպք, որը ոչ մի արձագանգ չուաւ մեզանում, մի դէպք, որի հանդէպ ինքը, տաճկական կառավարութիւնը, անշուշտ, կպահպանի իր լիակատար լոյալութիւնը եւ բարի դրացիութիւնը Խորհրդային Հայաստանի եւ այլ խորհրդային երկրների հետ, եթէ այդպիսի մի դէպք ընդունակ է աղմուկ բարձրացնելու, ապա պէտք է ուղղակի ասել, որ մարդիկ որոշել են պրովոկացիա սարքելու մեր դէմին։ Իսկ մենք յիմարներ չենք։

Պրովոկատորներին շատ լաւ ենք ճանաչում։ Նրանց ցոյց կտանք իրանց տեղը։ Իսկական վտանգը պէտք է սպասել հայկական հակայեղափոխական Դաշնակցութեան եւ Թրքական ոճրագործ դաւադիրների բանակից։ Նրանք վխտում են Պօլսի նեղ փողոցներում։ Մինչդեռ նոր Տաճկաստանի աշխատաւոր գիւղացիութիւնը եւ նրա տրամադրութեան հետ հաշուի նստող անգօրական կառավարութիւնը գիտեն, որ իրանց թիկունքը միանգամայն ապահովուած է՝ շնորհիւ Խորհրդային Ռուսաստանի ու Կովկասի։ Վերջիններս էլ չեն վախենում ոչ մի պրովոկացիայից, քանի որ նրանց յոյսը յեղափոխական աշխատաւորութիւնն է, Կարմիր Բանակն է, որ կոչուած է ամենուրեք խաղաղութիւնն ապահովելու, նրանց չեկաներն են, եւ արեւելքի (ընդ սմին եւ Տաճկաստանի) ժողովուրդների բուռն ցանկութիւնն է՝ հաշտ ու խաղաղ ապրել սոցիալիստական յեղափոխութեան օջախների հետ։

Այդպէս ուրեմն, «Երեւանի միջադէպը» մի ցնդաբանութիւն է, եւ Հայաստանն առաջուա նման եւ էլ աւելի խաղաղ օրեր է ապրում։ Այլ կերպ մտածողն ու խորհողը կա՛մ պրովոկատոր է, կա՛մ խենթ էր կա՛մ մոլորուած։

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԻՐԸ

Մնում է գաղթականութեան խնդիրը։ Օ՛, դաշնակցականները թուղթ ու թանաք չեն խնայում «ապացուցանելու» համար, թէ արդի Հայաստանը հայ գաղթականներին հրաժարւում է ընդունել։ Նրանք սովորաբար ակնարկներ են անում Պարսկաստանի գաղթականութեան վերաբերմամբ։ Պարսկաստանում մի ժամանակ գաղթականներ են եղել Դարբինեաններն, Օհանջանեաններն եւ Վրացեանները։ այսօր այն տեղ են այդ մարդկանց վարձկան ագէնտները։ Ինչպէ՞ս էք հրամայում։ պէ՞տք էր եւ պէ՞տք է արդեօք դրանց ընդունել։ Ո՛չ մի դէպքում, մեր կարծիքով նրանց չի կարելի «ընդունել» Հայաստան, որովհետեւ այդ մարդկանց նպատակն է կռիւների ու

սրածութեան վայր դարձնել Խորհրդային Հայաստանը։ Թո՛ղ փորձեն։ Իսկ մենք նրանց՝ Թալանի ու աւերածութեան այդ ասպետներին խաղաղութեան անկիւն չենք յատկացնել մեր երկրում։ Մնացեալ խաղաղ ու հալալ դաղթականութիւնը վաղուց հետէ անցել է Հայաստան։ Վերջին ժամանակներս վերադարձել են նախկին դաշնակցական զինուորներից ու սպաներից հարիւրաւոր մարդիկ, որոնք արդէն հասկացել են իրանց մոլորութիւնը։ Միջադետքից հազարներով եւ այլ վայրերից մեծ խմբերով դաղթականներ են անցել Հայաստան։ Տասնեակ հազարից անց է նրանց թիւը։

Այսօր Պոլսում սպասում է տասնեակ հազարաւոր հայ դաղթականութիւն, որին մենք յայտարարում ենք, որ հնարութիւն ունենք ընդունելու եւ տեղաւորելու Հայաստանում ու Կովկասում։ Բայց արտասահմանում եւս կա հարիւր հազարաւոր դաղթականութիւն։ Ի՞նչ անել նրա վերաբերմամբ։ Հայաստանը շատ հող չունի։ Նա ոռոգում է իր անջրդի տափարակները։ Դա արւում է եւ դաղթականութեան համար։ Բացի այդ, Խորհրդային Հայաստանի կայունութիւնն Արեւելքում արդէն առհաւատչեա է այն բանի, որ դաղթականութիւնը վաղ թէ ուշ հնարաւորութիւն պիտի ունենա իր համար մի տեղ գտնելու։ Դաշնակցականները կուելով Հայաստանի դէմ՝ կռիւ են մղում դաղթականութեան դէմ, որովհետեւ նրանք վնաս են հասցնում մեր գործի յաջող ելքին։ Այս տեսակէտից ո՛չ մի միտք չունին դաշնակցականների կանչկոտոցները, որ բարձրացնում են նրանք դաղթականական հարցի շուրջը։ Դա լոկ խեղկատակութիւն է, շաղախուած պրովոկացիայով, ստով ու անմտութեամբ։

Նրանք հակայեղափոխական ու հակաաշխատաւորական պրոպականդա են մղում նաեւ դաղթականութեան մեծածաւալ շարքերում։ Պոլսի «Ճակատամարտ» թերթը Բուլկարիայի, Ամերիկայի, Յունաստանի հայ դաղթականներին խորհուրդ է տալիս «չխաբուիլ» բոլշեւիկներից, հեռու կենալ յեղափոխական վարդապետութիւնից, իբանց երկրների աշխատաւորութիւնից եւ դրանով «հայի նամուսն» ազատել պղծութիւնից։ Եթէ հայ դաղթականութիւնը հետեւէր դրան, այն ժամանակ նա խաչ քաշած կլինէր իր ներկայի եւ իր ողջ ապագայի վրա։ Հայ դաղթականութեան ազատագրումը հէնց այն յեղափոխական պայքարի մէջն է, որ նա մղելու է իր կողքը տալով Եւրոպայի ու Ամերիկայի աշխատաւորութեան կողքին։ Օրինակը կա։ Դա Ամերիկայի հայ բանւորութեան ճիշտ գիծն է, որ նա երեւան է հանել՝ ստեղծելով Հայ Բանւորական Կազմակերպութիւն Ամերիկայում։ Եթէ դուք ուզում էք Հայաստանի զօրացումը, որով նա հնարաւորութիւն կունենա նորանոր դաղթականներ ընդունելու, եթէ դուք ուզում էք մի անգամ ընդմիշտ ազատել տնանկութիւնից, թշւառութիւնից ու չարքաշ դրութիւնից, դո՛ւք, հայ դաղթականներդ, որոնց թիւը հարիւր հազարներով է հաշւում, ապա վանեցէ՛ք ձեզանից հակաժողովրդական ու մարդադաւ դաշնակցականներին, որոնք մասն ունին ձեր դժբախտութեան մէջ, եւ փարւեցէք արդի յեղափոխական շարժմանը. միացած ձեր երկրների պրոլետարներին՝ քանդեցէք նրանց հետ միասին կապիտալիզմի, արեան, թշւառութեան ու հին աշխարհի հիմքերը։

Եւ դա հեշտ է անել այսօր, որովհետեւ հին աշխարհը ծւատւում է յեղափոխական շարժման հարւածներից, որի պատճառով էլ հէնց քայքայւում, տարրալուծւում եւ տակն ու վրա են լինում անցեալ կեանքի պաշտպան կանգնած կուսակցութիւնները։ Այս երկու հանգամանքը հեշտացնում է եւ Խորհրդային Հայաստանի պայքարն ու աշխատանքը։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ

Առաջին պայմաններից մէկն է Գերմանիայում տեղի ունեցող քաղաքացիական կռիւը։ Գերմանական յեղափոխութիւնը յաջող ելք ունենալով, արդէն կորոշէ մարդ-

կութեան ճակատագիրը մի անգամ ընդմիշտ։ Գերմանիան Եւրոպայի սիրտն է կազմում. երբ սիրտը յեղաշրջւի, կկերպարանաւորւի ըստ նորի նաեւ ողջ օրգանիզմը։ Այդ իսկ պատճառով խորհրդային երկրները, նրանց շարքում եւ Հայաստանը, սուր հետաքրքրութիւն են ցոյց տալիս գերմանական անցքերի հանդէպ եւ խիստ շահագրգռուած են գերմանական պրոլետարիատի յաղթութեան գործում։ Ուստի եւ մեր օգնութիւնը գերմանական պրոլետարիատին՝ անպակաս պիտի լինի։ Այն ծանր աշխատաքը, որ տանում են խորհրդային երկրները, գերմանական յեղափոխութեան յաղթանակի դէպքում կրկնակի կթեթեւնա, եւ մենք արագօրէն կշարժւենք դէպի մեր նպատակակէտը։ Ու մի՞թէ դրանում նոյն չափով չահ չունեն արտասահմանեան հայ աշխատաւորները։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐՀԱՍԸ

Երկրորդ հանգամանքը, դա Դաշնակցութեան անկումն է։ Հայաստանի դաշնակցականները լիկվիդացիայի ենթարկեցին իրանց կազմակերպութիւնները։ Նրանցից առաջ Դրօն ու ընկերներն իրանց յայտագրով սնանկ յայտարարեցին Դաշնակցութեան անցեալն ու նրա քաղաքականութիւնը, չնայած որ դաշնակցական թերթերն ու «Հ. Հ. Դաշնակցութեան արտասահմանի պատասխանատու մարմնի» պատասխանատու մարմնի» պատասխանը ա՛յլ բան են պնդում. «Վրաստանի Կենտրոնական Կոմիտէի անդամները մէկ տարիէ աւելի ձեմալ փաշայի սպանութենէն ի վեր բանտարկուած կմնային Մետեխի բերդին մէջ, բոլորովին կտրուած էին արտաքին աշխարհէն եւ յայտագիրն ստորագրած են բանտին մէջ, առանց դուրսի ընկերներու եւ մարմիններու հետ խորհրդակցելու եւ անոնց համաձայնութիւնն առնելու»։ Բանից դուրս է գալիս, որ միստիֆիկան «պատասխանատու մարմինն» իր ընկերներին միանգամայն նսեմացնում է, համարելով նրանց վախկոտներ ու մորթեպաշտներ, թէեւ, պէտք է ասած, որ յայտագիրն ստո-

բագրել են նրանք Թիֆլիսում, իրանց բնակարաններում. իսկ Դրօն նոյնիսկ այդ ակտի համար, իր ու իրայինների ձեռքով գրուած յայտագրի պատճէնը գրպանում, ճեպընթացով Մոսկւայից հասնում էր Թիֆլիս. այն Մոսկւայից, որտեղ նա ազատօրէն պարապում էր իր անձնական տնտեսական գործերով։

Մնում է արտասահմանեան Դաշնակցութիւնը, որ իր վերջին օրերն է ապրում։ Ճիշտ է, նա դեռ ունի օրապահուստ, հրատարակում է իր թերթերը, եւ այնտեղ ինչ որ «թէօրիաներ» են թխում նրա տեսաբանները, բայց այդ ամէնը հայ ազգայնական ինտելլիգենցիայի կամ հայ վարժապետութեան վերջին շունչն է։ Վարժապետ «թէօրետիկոսներն» իրանց կուսակցութեան դագաղի մեխերն են խփում եւ իրանք էլ պատրաստւում են այնտեղ տեղաւորուելու։ Մասսաները նրանցից հեռանում են։ Արտասահմանեան խարւած հայ դաղթականները նմանապէս հրաժարւում են Դաշնակցութիւնից։ Նրա վաղեմի բարեկամներից մէկը՝ Զաչխուչեան, իր դամբանականը նոր միայն վերջացրեց, որն ուղղւած է Դաշնակցութեան հասցէին։ Աւելի խիստ մեղադրական է կարդում այսօր Դաշնակցութեան սիւներից մէկը՝ Բաջազնունին, որ նորերս լոյս տեսած իր գրքոյկում քննադատելով Դաշնակցութեան քաղաքականութիւնն ու էութիւնը, ելնելով արդի Հայաստանին ամէն կերպ օգնելու տեսակէտից, այսպիսի ծանրակշիռ ու սպանիչ վճիռ է հանում իր կուսակցութեան համար։ «Ի՞նչ անել ուրեմն։ Ահա այստեղ է, որ պիտի ասեմ այն շատ ծանր խօսքը, որ՝ գիտեմ՝ վրդովեցնելու է ձեզ (*այսինքն՝ դաշնակցականներին.— Ա. Մ.*), բայց որը պէտք է ասւի վերջապէս եւ ասւի պարզօրէն, առանց քողարկումների եւ մեղմացումների. Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՆԵԼԻՔ ԶՈՒՆԻ ԱՑԼԵԻՍ»։

Խորհրդային Հայաստանն այդ խօսքը վաղուց է ասել։ Շատ լաւ, եթէ այն կրկնում են այսօր թունդ դաշնակցականները, շատ վատ, եթէ հակառակն են պնդում դաշնակցական ջոջերը։ Բայց գլխաւորն այն է, որ այդ

վճիռն են հանում եւ դաշնակցական մասսաները։ Դրանով նրանք թեթեւացնում են մեր ընդհանուր գործը։ Այժմ դառնանք այդ գործին։

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Երեք տարի անցաւ այն օրւանից։ Հայաստանն սկզբում միանգամայն մեկուսացած էր։ Անցեալ տարի Վրաստանի ու Ադրբեջանի հետ միասին նա կազմեց Կովկասեան Ֆեդերացիան, որն այս տարի մտաւ Համախորհրդային Միութեան ծոցը։ Այդպիսով Հայաստանը կազմեց Խորհրդային երկրների միացեալ բանակի մի մասնիկը։ Այս առիթով հայ վարժապետները հարայ-հրոց են բարձրացնում, թէ Հայաստանը կորցրեց իր անկախութիւնը, թէ նրանում տիրապետողը ռուսական սուինն է։

Ի՞նչ է պետական անկախութիւնը։ Արդեօք Հայաստանն անկախ եղե՞լ է դաշնակցականների տիրապետութեան օրով։ Ոչ, որովհետեւ Հայաստան կոչւած վայրում տիրողը եղել է անգլիացին, իսկ նրան արտաքսելուց յետո՝ Թուրքը։ Միմիայն հայ աշխատաւորութեան ըմբոստացումն ու ռուսական Կարմիր բանակի օգնութիւնը հնարաւորութիւն տւին հայ աշխատաւորին ազատ շունչ քաշելու։ Այժմ Հայաստանը ռուս բանւորի, վրացի եւ ադրբէջանցի գիւղացու բարեկամն է։ Ի՞նչ կա այստեղ խորշելու։ Դրանով մենք պարծենում ենք։ Այսօր Հայաստանում շատ աւելի դիւրին եւ ազատ են շրջագայութիւնը, աշխատանքը եւ զարգացումը։ Լեզուն ու կուլտուրան աւելի բարձր դրութեան մէջ են, քան առաջ։ Մարդկային անհատականութիւնն, արժանապատուութիւնն աւելի յարգի են, քան դաշնակցականների օրով էին։ Չկա վարժապետականութիւն, սեմինարիզմ, մարդատեցութիւն, սոորաքարշութիւն, տուրուդմփոց, սրածութիւն, լաց ու շիւան։ Ուրեմն հարցն ինչու՞մն է։ Հա, մի բան էլ է պակասում այսօր՝ կապիտալի շահագործումը։ Դաշնակցականները Հայաստանը տանում էին դէպի կապիտալիստական դժոխքը։ Նրանք լծւել էին կապիտալին, այսինքն՝ ամերիկացուն, անգլիացուն, հայ վաճառականին ու սպեկուլանտին։ Այսօր այլ է պատկերը։ Այն ժամանակ էլ կար պետութիւն, այժմ էլ։ Նա էլ իրան անկախ էր համարում, սա էլ անկախ է։ Ո՞րն է ընտրում ժողովուրդը։ ո՞րն է աւելի լաւ։ Համեմատեցէ՛ք ու կըմբռնէք։ Իսկ անկախութեան մասին գրածները դաշնակցական «Հայրենիք»ի էջերում ոչ այլ ինչ են, եթէ ոչ սոսկ փոկուսնիկութիւն ու տխմար խաբեբայութիւն։

ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Այս երեք տարիների գլխաւոր արժանիքներից են պրօլետարական ու աշխատաւորական տարրերի համերաշխութեան գաղափարը, ազգային համերաշխութեան քարոզն ու գործը։ Դրանց արդիւնքները շատ խոշոր են։ Շնորհիւ դրանց է, որ Հայաստանն օրէօր առաջդիմում է։ Խորհրդային Միութիւնն ու Կովկասեան Ֆեդերացիան մեծապէս դարկ տւին Հայաստանի բարգաւաճման գործին։ Ազատւած եւ ինքնուրոյն Հայաստանը ո՛չ թէ յետադիմում է, ո՛չ թէ կանգնած է մի մակարդակի վրա, այլ շարժւում է, առաջ է գնում, ուժեղանում։ Բայց դեռ ինչքա՜ն աշխատանք կա կատարելու։ Մենք որքան առաջդիմում ենք, այնքան էլ մեծ ուշադրութիւն ենք դարձնում մեր բացերին, նրեւան ենք հանում մեր խոցերը եւ նրանց բուժելու միջոցներ ենք որոնում։ Իսկ պահանջներ կան ու կան։ Ահա սա է, որ լուծում է այսօրւա Հայաստանը։ Այլ հարցեր չկան, այս խնդիրներն են, առօրեա բացերն են ծառանում մեր առաջ։ Ու դա մեր «Լուր օրերն» է՝ դառնանք նրանց։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Հայաստանի ընդհանուր կուլտուրական մակարդակը, անշուշտ, բարձրանում է։ Ամենից առաջ կենդանանում են քաղաքները, թէեւ այս բնագաւառում դեռեւս մեծ աշխատանք կա կատարելու։ Սակայն առանց գիւղի

ոչինչ չի կարելի անել մեր երկրում, քանի որ նա գերազանցապէս գիւղացիական վայր է: Մինչդեռ գիւղը տակաւին ծանր օրեր է ապրում: Ահա՛ այդ գիւղն ըստ ընկ. Մ. Բագրատունու նկարագրութեան.—

«Երբ Աշտարակը, Կարբիի անցնում ես, Իլանչալանից սկսած արդէն սկսւում է խաւար աշխարհը եւ մէկը միւսի հետեւից այս եւ այն բարձրաւանդակի տակ, Արագածի ստորոտներում, գետնի երեսին հազիւ նշմարւում են ինչ որ խորդ ու բորդութիւններ, կիսակոնուսաւոր ցած խուղեր, որոնցից՝ կարծէք հրաբխային խառնարաններից՝ դուրս են բարձրանում ծխի ֆուլաներ: Դրանք Աբարանի գիւղերն են, որոնք իրանց բնակավայրերի տեսքով, նաշակով ու կուլտուրայով դեռ ապրում են քսենեֆոնեան դարերում:

Ամենայն իրաւամբ կարելի է ասել, որ այստեղ մարդկային մտքի եւ առաջադիմութեան էվոլիւցիան դադարել է առաջ շարժւել, սայլը կոտրւել ու այնպէս կանգնել մնացել է դարերի ընթացքում:

Աբարանը մեկուսացած, դրսի աշխարհից կտրւած, ոչ մի հոսանք, ստափեցուցիչ թարմ օդ չի մտել այդտեղ: Գիւղացիութեան մտաւոր զարգացման աստիճանը որոշում է նրա կեանքի, կենցաղավարութեան, տնտեսութեան յետամնաց վիճակը. շրջապատող առարկաները, տան ներսի կահաւորութիւնը, հողէ կնուն-բժուքը, դըգալը, ամանեղէնները, տան սիւները, նրագը, նրագկալը— ձեզ յիշեցնում են անդրմիջնադարեան կաւի դարաշրջանները. ամեն ինչ հասարակ քարէ, հող եւ ծխից ու մրից սեւացած կոշտ ու կոպիտ տաշած փայտ»:

ՄԱՀԻԱՆ ԿՈՒԻ ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Այդպէս է հայ գիւղը շատ տեղերում՝ խաւար, գետնափոր, ետընկած, տգէտ ու աղքատ, նամանաւանդ գետնափոր: Դա տգիտութեան եւ աղքատութեան լուռ արձանն է, աղաղակող յիշատակը: Մահւան կուիւ պէտք է յայտարարել այդ գետնափորութեան: Մեր կարծիքով դրա համար պէտք է գիւղացուն սրսկել նախ՝ գրագիտութեան, երկրորդ՝ նախաձեռնութեան եւ երրորդ՝ ինքնօգնութեան չիճուկները:

Մեծ ցաւը նրանումն է, որ հայ գիւղացին տգէտ է, մտաւորապէս խաւար: Եթէ գիւղացին տգէտ է, ապա դա կրկնակի պատուհաս է, որովհետեւ գիւղացին իր տնտեսական վիճակով անշարժ է, պահպանողական ու բթացած: Այստեղից մեկնելով՝ պէտք է ամեն ջանք թափել գիւղացուն լուսաւորելու համար: Խորհրդային կարգերը թոյլ են տալիս մեր գիւղացուն զարգանալու. փոխանակ գնալու եւ կապիտալիզմի դիրքն ընկնելու, գիւղացին այսօր դիմում է դէպի սոցիալիզմ: Սակայն առանց հողը լաւ մշակելու, առանց հացի ու հանդստի՝ չկա սոցիալիզմ: Հողը լաւ մշակել, պատշաճ հագուստով ման գալ եւ կուշտ ապրել կարող է նա՝ ով ունի գիր, ունի վարժ ու թափանցող միտք, ով իր նիստուկացի մէջ գիտէ կիրառել կեանքի ու զարգացման գոնէ ամենակարեւոր եւ շատ ընդհանուր օրէնքները կամ կանոնները: Մեր գիւղացին չի ընտելացած դրան. այդ պատճառով էլ նա խեղճ է, յետամնաց ու աղքատ:

Քանդեցէ՛ք այդ գետնափոր տները: Տուէք գիւղացուն հագուստ, վառելանիւթ եւ աղ: Սա՛ է օրւա պահանջը: Բայց ամենից առաջ, եթէ ուզում էք, տուէք նրան ուսում, գիտութիւն: Ժողովրդական Լուսաւորութեան Կոմիսարիատի առաջնակարգ գործն է ոչ թէ միայն Հայաստանում, այլեւ Կովկասեան այլ հանրապետութիւններում եւ Ռուսաստանում, գրագիտութեան եւ հանրային գիտելիքների տարածումը: Քաղաքին լուսաւորութիւն պէտք է, պէտք են այդ թանգարանները, թատրոններն ու համալսարանները. բայց աւելի մեծ անհրաժեշտութիւն է թանգարանը, թատրոնն ու համալսարանը գիւղում, որը գրագիտութիւն *բառով է ընորոշւում, առանց որի՝ չկա գիւղացու բարեկեցութիւն, իսկ առանց վերջինիս՝ հնարաւոր չէ* օրգանապէս *խորհրդային շինարարութեամբ*

տարուել։ Գրագիտութիւնը դուրս կբերի հայ գիւղը, ինչպէս ընկ. Բաղրատունին է որակում՝ նրա քսենեֆոնեան դարաշրջանից։

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ

Գիւղում լուսաւորութիւն տարածողը պէտք է լինի ուսուցիչը։ Դա սովետական ուսուցիչն է։ Վարժապետների դարն անցաւ։ Մեզ պէտք են յեղափոխական, պրոլետարական ու մարդասէր ուսուցիչներ։ Նրանց թիւը շատ չէ։ Պէտք է պատրաստել եւ արագ կերպով պատրաստել Խորհրդային Իշխանութեան այդ կարեւորագոյն աշխատակիցներին։ Ուսուցիչն է, որ երիտասարդութեան հետ միասին ստեղծելու եւ շինելու է նոր գիւղը։ Արդ, մեր նշանաբանն է լինելու՝ կեցցէ՛ գիւղական ուսուցիչը, դուրս բերենք մեր աշխատաւորութեան մէջից հարիւրներով ու հազարներով ուսուցիչներ։ Սա շատ խոշոր հարց է, եւ պէտք է լուծի Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատը։

Այդ հարցն ունի եւ իր նիւթական կողմը։ Մեր ուսուցիչներին անհրաժեշտ է դուրս բերել նրանց վատթար, նրանց դժոխային դրութիւնից։ Ինչպէս մենք ապահովում ենք մեր լաւագոյն աշխատողներին, հարկաւոր է նիւթական տանելի պայմանների մէջ դնել ուսուցչութիւնը թէ գիւղում եւ թէ քաղաքներում։ Առանց այդ ապահովութեան մենք չենք ունենալ ոչ դպրոց, ոչ ուսում, ոչ էլ դասատուների կազմ ու պատրաստ բանակ։ Մեր կուսակցութիւնն է, որ պէտք է դարձնի իր խորին ուշադրութիւնը արծարծած կենսական ու ամենաառաջնակարգ խնդրին։

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍԸ

Հայ գիւղը զուրկ է նախաձեռնութիւնից։ Նախաձեռնութիւնը պակասում է այնտեղ, որտեղ չկա դէմք, չկա

կորով, չկա կամք։ Դա յատուկ է գիւղացուն, առաւել եւս հայ գիւղացուն՝ յետամնաց ու աղքատ այդ տարրին։ Հայ գիւղացու այդ դիմադրկութիւնը հեշտութեամբ կվերանա խորհրդային կարգերի օրով, եթէ միայն գիւղացին ունենա ինքնագիտակցութիւն։ Լուսաւորութիւնը մեծ զարկ է տալիս նախաձեռնութեան, առանց որի անհնար է դառնում տնտեսական կեանքի զարգացումը։ Մենք շատ լաւ գիտենք, ինչպէս ասացինք, որ գիւղն ու նախաձեռնութիւնը հակոտնեաներ են։ Ձեռներէցութիւնը յատուկ է արդի քաղաքին, հոսող եւ մի ժամանակ առաջընթաց երեւոյթ կազմող կապիտալին, բուրժուական մասնաւոր սեփականութեան։ Բանն էլ հենց նրանումն է, որ մեր գիւղն առաջ ընթանա նախկին կապիտալիզմի օրինակով հեց այս խնդրում՝ արագօրէն, ժիր եւ լի թափով։ Պէտք է տալ գիւղացուն արթուն ու խուզարկու միտք նրա նախաձեռնութիւնը շարժել իւրաքանչիւր րոպէ, ամէն բանում։ Եթէ սոցիալիզմը եւ խորհրդային կարգերը կարող են օգնութեան հասնել գիւղին ու գիւղացուն, ապա դա հնարաւոր է գիւղացու արթնացման ու կայտառութեան գնով, տնտեսական ու կու՛լտուրական կեանքում պրպտելու, փնտրելու, շարժուելու եւ առաջընթանալու ճանապարհով։

ԻՆՔՆՕԳՆՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍԸ

Պակասում է գիւղացուն եւ՝ ինքնօգնութիւնը, որն անրաժան է նախաձեռնութիւնից։ Երկուսը միասին այն հսկայական ուժն են կազմում, որը յեղաշրջելու է արդի գիւղը։ Ո՞րն է ինքնօգնութեան պակասը։ Բերե՛նք օրինակ։ Գաւառները շրջելիս միշտ էլ մի երեւոյթ է աչքի զարնում, դա— խելամտութեան կամ ճիրքի կատարեալ բացակայութիւնն է։ Գիւղացին դարերից ի վեր գիտէ, օրինակ, մի ձեւով շինել իր տունը. փոս, քար, ցեխ ու մի փտած գերան. ահա սա է նրա տունը։ Հնարել, ճարել ու գործածել այլ միջոց՝ նա չգիտէ։ Նայեցէ՛ք, օրինակ, Նոր

Բայազետի դաւառին: Այնտեղ, նամանաւանդ Սեւանտ լճի ափերին մեծ քանակութեամբ բնում է եղեգնը: Մոլոկաններն օգտագործում են այդ՝ տան կտուրը ծածկելու համար: Ալէքսանդրովկա գիւղի տները կարգին են: Նրանից մօտ երեք վերստի վրա գտնւող հայկական Ռախմանքենդ գիւղի տներն այլ պատկեր են ներկայացնում: Ահա՛ գիւղի մի թաղում գիւղացին իր փլած տունն է կարկատում: Մտնում ես ներսը. կտուրը բաց է, նա մնում է չաւարտուած, որովհետեւ տանտէրը փայտ չունի, իսկ Բայազետի շրջանում փայտ ասածդ չկա: Հապա ինչո՞ւ եղեգնով չես ծածկում կտուրը, բնականօրէն հարց ես ուղղում նրան եւ ցոյց տալիս մօտակայքում աճող եղեգն: Գիւղացին քթի տակ ծիծաղում է: Նրա կարծիքով եղեգնը ո՛չ մի բանի պիտանի նիւթ չէ: Մեր գիւղացին չի իմանում, թէ ի՛նչ ասել է յատակն ու պատերը սուաղելը, այդ պատճառով էլ ձմեռը նրա տունը ցուրտ է, պատերից չարունակ թափթփում ու կաթում է. նրա օթախն անհամբոյր է: Այս ամենը կարգի բերելու համար փող չի հարկաւոր: Պէտք է միայն մի փոքրիկ աշխատանք, ձեռներէցութիւն եւ ըմբռնումն այն բանի, թէ առանց հնարի, ինքնօգնութեան կամ եղած հում նիւթից մի բան ստեղծելու ինքնագիտակցութեան՝ չկա տանելի կեանք, չկա առաջադիմութիւն:

Սրամիտ ընթերցողը մեր այս «քարոզը» կհամեմատէ երեւի անգլիացի Սմայլսի բարոյախօսական դրուածքներին, («Ինքնօգնութիւն», «Խնայողութիւն», «Բնաւորութիւն», «Պարտք», «Խելք եւ Էներգիա», եւ այլն): Թող համեմատի: Մի՞թէ սոցիալիստական կարգերը չեն զբաղւում «մանր» խնդիրներով. խորհրդային իրաւակարգի առօրեան ու ընթացիկը՝ դա ինքը սոցիալիզմն է: Մինչ պրոլետարական տիրապետութիւնն անարժէք են Սմայլսի բարոյախօսականները. նրանք թերեւս բաւարարում են քաղքենու կամ կապիտալիստ ու վաճառական դառնալ ձգտողի ախորժակը. եւ միմիայն այդքան: Սոցիալիստական էպոխան վտարում է մեշչանիզմը եւ բուրժուական բարոյախօսութիւնը: Այն, ինչ որ առաջարկում է Սմայլսիզմ է, սակայն այսօրուա, սոցիալիստական, պրոլետարական սմայլսիզմ է: Տիրապետողը մեղանում աշխատաւորն է: Եւ նա չինարարութեամբ է զբաղւած: Հայաստանի բանւորն ու աղքատ գիւղացին ամենից առաջ վերաշինելու են գիւղը, քանի որ նա գիւղացիական Հայաստանի հիմքն է կազմում: Այս տեսակէտից մեր գիւղը, ըստ այնմ եւ երկիրը, ընթանալու է գիւղատնտեսութեան զարգացման եւ լուսաւորութեան պատւաստումի ուղիներով: Հողագործութեան Ժողովրդական Լուսաւորութեան Կոմիսարիատներ՝ ահա՛ երկու գլխաւոր կէտեր, որոնց վրա երկու ամուր ոտներով պէտք է կանգնած լինի Խորհրդային Հայաստանը: Բայց այս հարցին մենք դեռ կվերադառնանք:

Հ.Ս.Խ.Հ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ Հ.Ս.Հ.Հ. Պետական Գրադարան 7/XI-1922 ԵՐԵՎԱՆ, Ազգային Գրադարան Ա. ՍԱՅԱՆԻ անվան

1003
12155

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է

Այստեղ առաջ է գալիս եւ մի այլ խնդիր: «Դուք չարունակ գիւղից, գիւղատնտեսութիւնից էք խօսում. ուրեմն Հայաստանը սոսկ գիւղատնտեսական երկի՞ր էք համարում»: Այո՛, կպատասխանենք դրան: Այս ոչ ֆիզիօկրատիզմ է, ո՛չ էլ Նալբանդեանի «Երկրագործութիւնը»: Առաջինը խոշոր բուրժուազիայի նախնական տնտեսագիտութիւնն է, երկրորդը «մանր մարդու», մանր սեփականատիրոջ ձգտումն է: Սոցիալիզը հեռու է թէ՛ մէկից եւ թէ միւսից: Նա վերցնում է երեւոյթներն այնպէս, ինչպէս նրանք կան: Հայաստանը չունի գործարաններ: Եթէ նրա հողերը ոռոգւեն, այն ժամանակ նա կլինի ըստ ամենայնի հարուստ հողային երկիր: Ինդուստրիայի զարգացման համար ներկայումս հեռանկար չենք տեսնում Հայաստանում: Բայց նա ունի բամբակ, խաղող, բրինձ, մետաքս եւայլն: Գիւղական թանգարժէք կուլտուրաներ— սա՛ է մեր երկրի հիմքը: Բամբակի սերմ, խաղողի վազ եւ ջուր՝ սրանց դումարը մեզ կտա հարուստ եւ ապահովւած Խորհրդային Հայաստան:

Սոցիալիզմը չի անջատում գիւղը քաղաքից. նա չի

կորում ինդուստրիան գիւղատնտեսութիւնից։ Այս տեսակէտից մեզ համար քննադատութեան չի դիմանում ոչ ֆիզիօկրատիզմը, ո՛չ էլ Սիսմոնդին կամ «Երկրագործութիւնը»։

Եթէ մենք կրկնում ենք այն միտքը, թէ Հայաստանը գիւղատնտեսական վայր է, դա ամենևին էլ չի ժխտում այն միտքը թէ գիւղերը պէտք է շաղկապել քաղաքների հետ։ Գիւղատնտեսական Հայաստան եւ ինդուստրիէլ Բաքու կամ ռուսական շուկա։ Այսպէս է այսօր։ Ապագայում կարող է լինել եւ հայկական արդիւնագործութիւն։ Մի խօսքով, ինչպէս Էնգէլսն էր ասում, սօցիալիզմի օրօք քաղաքն ու գիւղը մի մարմին են կազմում եւ վերանում է նրանց միջի խորխորատը, նրանց այն անհարազատութիւնը, որն արդիւնք է կապիտալիստական կարգերի։

Բայց եւ կրացականչեն՝ «Ի՞նչպէս է որ գիւղացիական երկրում պրօլետարական դիկտատուրա գոյութիւն ունի»։ Մենք էլ կհարցնենք. «Ե՞րբ եւ ո՞րտեղ է ասուած, թէ գիւղատնտեսական երկրներում սօցիալիզմ չի լինի։ Ընդհակառակն, մարքսիզմը միշտ էլ ուսուցանել է, որ գիւղացիական վայրերը սօցիալիստական յեղափոխութեան միջոցին օժանդակութիւն եւ օգնութիւն կստանան առաջնակարգ, ինդուստրիէլ ու պրօլետարական երկրների կողմից։

ԳԻՒՂԸ ՊԷՏՔ Է ԲԱՐՁՐԱՑՆԵԼ

Այժմ վերադառնանք Հողագործութեան Կոմիսսարիատին, որին, ինչպէս երեւում է, վիճակուած է խոշոր դեր կատարելու Հայաստանում։ Նա է Հայաստանի ողջ տընտեսութեան, նրա հարստութիւնների ու նրա նիւթական շինարարութեան ղեկավարը։ Նրա օրգանները ամենաազդեցիկ, ամենամարտական եւ ամենաձեռներէց միաւորները պէտք է լինեն։ Նրանք սերտ կերպով պէտք է կապուեն գիւղացուն, նրա նիստ ու կացին։ Մենք գիւղը լաւ չենք իմանում եւ պէտք է ասած, որ տեղեակ չենք նրա

անցուդարձերին, սովորոյթներին. նրա կարողութեան։ Գիւղը պէտք է ճանաչել ու հասկանալ նրան։ Պէտք է տեղեակ լինել նրա անցեալին, ներկային, նրա կենցաղին։ Այդ պատճառով էլ պէտք է սերտ կապ պահել գիւղի հետ։

Շատ անգամ է աչքաթաղ արւել գիւղը։ Իշխանութեան ֆօկուսը կենտրոնումն է. խոշոր ու պատասխանատու աշխատողները մայրաքաղաքումն են ապրում, զբաղուած իրանց առօրեա գործունէութեամբ եւ նրանք դժուարանում են գիւղ անցնել։ Նոյնիսկ գաւառական գործադիր կոմիտէների անդամներն ու աշխատակիցները մշտնջենական յարաբերութեան մէջ չեն գիւղի հետ։ Կենտրոնը, վերի աշխատանքը եւ առանձնասենեակը պարփակում են ամենայն ինչ, իսկ իսկական կենտրոնը, գիւղը յաճախ վերջին շարքն է քաշւում։ Սրա դէմ պէտք է կուել։ Այն շարժումը, որին ընտելացնել ենք աշխատում մեր գիւղացուն, ամենից առաջ պարտական ենք կիրառել մենք ինքներս։ Անխզելի եւ անընդհատ պահպանուող կապ գիւղի եւ կենտրոնական Խորհրդային Իշխանութեան միջեւ, պատասխանատու ընկերների փոխադրութիւնը գիւղ՝ այնտեղ աշխատելու, գիւղացուն շարժելու եւ գիւղը վերաշինելու նպատակով—սա ընթացիկ, կարեւորագոյն հարցերից մէկն է։ Գիւղի հեռանկարը, նրա առաջնակարգ լինելը ո՛չ մի դէպքում, ո՛չ մի ժամանակ չպէտք է վրիպի մեր ուշադրութիւնից։ Մեր կառավարութիւնը, որպէս արթուն հսկիչ, աշխատում է եւ էլ աւելի ջանք կթափէ այդ ուղղութեամբ։

ԿՕՕՊԵՐԱՑԻԱՆ

Գիւղատնտեսութիւնն ու գիւղը բարձրացնելու նպատակին են ծառայում եւ այլ պայմաններ. դրանք երկուսն են՝ կօօպերացիան եւ կոմմունիստական երիտասարդութիւնը (Կոմսոմօլը)։ Կօօպերացիայի մասին շատ է խօսւած, սակայն քիչ բան է արւած։ Խորհրդային կարգերում կօօպերացիան մի առանցք է, որի շուրջն է հաւաքւում

ժողովրդի տնտեսութիւնը, նրա նիւթական բովանդակ կարողութիւնը: Դա կասկածից դուրս է: Որովհետեւ Կոոպերացիան լինելով ազատ ու անկաշկանդ հասարակական մարմին, առանց հրամանի եւ առանց ի վերուստ դրած օրէնքների կազմակերպում է տնտեսութիւնը, ամենից առաջ մանրն ու միջակը, արդիւնաբերութիւնն, առեւտուրը եւ վարկը: Կոոպերացիան ո՛չ միայն առեւտուր է, նաեւ կոոպերատիվ կամ ընկերային առեւտուր. նաեւ արտադրութիւն է, նաեւ վարկ է: Գիւղացին կարօտ է նաւթի, հագուստեղէնի եւ աղի. եթէ այս երեք բանը մատակարարուի նրան, գիւղացին երջանիկ կդդա իրեն: Մասնաւոր առեւտուրը ճնշիչ է: Մնում է պետական եւ կոոպերատիվ առեւտուրը: Սրանք էլ յաճախ վարակուում են առաջինից, նրա վատ պրակտիկայից: Կոոպերացիան որպէս հասարակական, ընկերային օրգան, պէտք է նը-պաստէ գիւղացուն, իր բարերար ապաստատով մատուցանէ նրան էժանագին հագուստ, աղ ու նաւթ: Դրա համար ինքը կոոպերացիան պէտք է որ էժան ու ճկուն հիմնարկութիւն լինի:

Իսկ նրա էժանութիւնն ու ճկունութիւնը կախուած է նրա մասսայականութիւնից: Մասսայական կոոպերացիան գիւղի վստահութեանը կոթնած մի մարմին է: Այդ վստահութիւնը ձեռք է բերւում անդուլ, անձնուէր եւ հաւատարիմ աշխատանքով: Դա նշանակում է, որ կոոպերացիան ցոյց է տալու գիւղացուն իր պիտանի, գործնական դէմքը: Եւ այդ ոչ միայն առեւտրի ասպարիզում, այլ աւելի շատ արտադրութեան մէջ կամ գիւղական արդիւնաբերութեանը տրուղ անմիջական օգնութեան դէպքում: Եթէ կոոպերացիան փաստերով ու օրինակով ապացուցանէ գիւղացուն, որ նա նորանոր ուղիներ է բաց անում գիւղատնտեսութեան առաջ, այն ժամանակ կոոպերացիայի գործը գիւղում միանգամայն ապահովուած է:

Կոոպերատիվ վարուցանքը, կոոպերատիվ աշխատանքը դաշտում, կոոպերատիվ վարկն ու կոոպերատիվների միջոցով ստացուած էժանագին գործիքներն,— այս ամենը կազմում է գիւղական կոոպերացիայի նիւթական արմատը: Գիւղացուն չի կարելի կոմունիստ դարձնել հրահանգներով. գիւղացին չի լինի կոմունիստ սոսկ ագիտացիայի միջոցով: Գիւղացին կապուած է բնութեանը, վերնէս նման նա փաստ, առարկա ու նիւթ է սիրում: Կոմունիստական քարոզը գիւղում պէտք է լինի իրական, նիւթական, փաստական: Գիւղական կոմունան կամ ար-

տելը չի ստեղծուի լոկ բարի ցանկութեամբ կամ գեղեցիկ խօսքերով՝ «եկէ՛ք, կազմենք կոմմունա եւ միասին տընտեսենք ու սպառենք»: Գիւղացին յոռետես է եւ դիտող: Կա՞ մեզանում կոոպերացիա: Թող նա փորձով դաշտում ցոյց տա գիւղացուն, որ կոոպերատիվ աշխատանքն ու տնտեսութիւնը աւելի ձեռնտու է քան մասնաւորը: Մի յաւ ու գործնական օրինակը վարակիչ կլինի ողջ շրջապատի համար: Միմիայն այդ դէպքում նա կլինի իսկապէս որ կրթիչ ու կուլ՝տուրական գործօն մեր գիւղում:

Մասնաւոր առեւտրին, սպեկուլացիային կռիւ յայտարարող ու աշխատաւորավարի, էժան գներով առեւտուր անող կոոպերատիվների եւ գիւղի, գիւղատնտեսութեան ծախքերը թեթեւացնող ու գործով գիւղացուն համայնավարութեան պատրաստող կոոպերացիայի դումարը՝ դա ինքը սոցիալիզմն է, որ սկսել է քայլել ու չինել արդի գիւղերը, մեր դաշտերն ու տափարակները:

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Կոմմունիստական երիտասարդութիւն: Նա գիւղի ողջ ապագան է: Գիւղի անցեալը յայտնի է: Նրա ներկան անհանձելի է: Մնացել են հնի հետեւանքներն ու բեկորները: Ներկան իսկապէս ասած չկա: Գիւղի յատկանիշ կողմն է անցեալով փարուել կապիտալին, ապագայում՝ աշխատանքին, ներկան դատարկ է, ամայացած: Այդ բացը լցնում է Խորհրդային Իշխանութիւնը. նրա անդուլ ջանքերը մի նպատակ ունին. բարելաւել գիւղը եւ պատրաստել նրան յանուն ապագայի: Ինչպիսի՞ նիւթ կա գիւղում այդ աշխատանքը տանելու համար: Կինը տակաւին քնած է: Տարիքաւոր տղամարդը յաճախ ենթակա է ծերերին կամ գնում է ծերերի ճանապարհով: Ծերերն անցեալի բեկորներն են: Կան ջահելները, երիտասարդները: Նրանք են, որ կերպարանափոխելու են այսօրուա գիւղը: Երեք, հինգ ու տասը տարի, եւ գիւղի ողջ անձնական կազմը բաղկացած կլինի այսօրուա երիտասարդութիւնից:

Ախալքալաքի գաւառի գիւղերից է հայկական Սուլդան, որ ունի 272 տուն. Գիւղի ամենակրթուած «առաջնակարգ» ու ձեռներէց անձն է Ներսիսեանաւարտ ալեզարդ Ֆարմանեանը: Նա գիւղական հասարակութեան այծն է: Գիւղը նրա բերնովն է խօսում: Ֆարմանեանը շատ պահանջկոտ է: Գիւղում ամենայն ինչ վատ է, ոչինչ չկա, եւ Ֆարմանեանի շրթունքներից պահանջներ, պա-

հանջներ ու պահանջներ են, որ թափւում են: Ֆարմանեանը իսկապէս անբաւական է եւ խորհուրդներից: Նա վարժապետ է: Հարկաւ, նա դաշնակ է, միշտ վրդովւող է եւ խառնակիչ: Ի՞նչ բարերար ազդեցութիւն կարող է ունենալ այդ մարդը գիւղի վրա: Երբ բացատրում ես գիւղացիներին, թէ բանը ինչումն է, Ֆարմանեանը իսկոյն եւ եթ նահանջում է: Պէտք է հայ գիւղն ազատել Ֆարմանեաններից: Եւ դա մեր Կոմսոմոլի պարտականութիւնն է: Ինչպէ՞ս:

Կոմմունիստական երիտասարդութիւնը գիւղում պիտի լինի յեղաշրջիչ ուժ: Եւ այս ձեւով: Գիւղում պէտք չէ իշխանաւոր կոմսոմոլ, հրամայող, կառավարող եւ իշխանութիւն անող կոմսոմոլ. ո՛չ էլ ենթակա, պասսիվ կոմսոմոլ: Գիւղում կա եւ մնում է Խորհրդային Իշխանութիւնը. կոմսոմոլն օժանդակում է նրան: Նա կազմակերպում է երիտասարդներին, ընտելացնում է նրանց ինքնուրոյն ձեռնարկութեան, ինքնօգնութեան. դուրս է բերում նրանց քահանայի, վարժապետի, ալեւորի, ռեսի, դուբանչու ու նահապետի ազդեցութեան տակից: Հողագործական, լուսաւորութեան եւ կօօպերատիվ աշխատանքների ասպարիզում կոմսոմոլն իր հերթին վարժեցնում է երիտասարդ խաւերին, նախապատրաստում է նրանց հին գիւղը վերածելու նորի՝ ժամանակակից խորհրդային, սոցիալական հիմունքներին կոթնած նոր գիւղի: Հին սերունդը դժւարանում է այդ անել: Դա նոր սերնդի եւ հնից դուրս եկած լաւագոյնների գործն է: Ահա այսպիսի մի մեծ կուլ՝տուրական աշխատանքի դիմաց է կանգնած ժամանակակից գիւղական երիտասարդութիւնը: Այս ամենը կատարւում է եւ պիտի արւի Հայաստանում: Որքան էլ գայրանան, չարախօսեն ու ծիծաղեն թշնամիները մեր կոմմունիստական երիտասարդութեան վրա, մեր աշխատանքի դիմաց գիւղում, որքան էլ նրանք պրովոկացիօն յուրեր տարածեն կրօնին վերաբերեալ մեր քաղաքականութեան առիթով, ինչ սուտեր էլ յօրինեն նրանք հայ գիւղացու տրամադրութեան մասին, գիւղի յեղափոխական աշխատաւորութիւնը կգնա իր ուղիով: Նա հրաժարւում է վարժապետներից, տէրտէրներից ու խմբապետներից: Նա ձգտում է կուլտուրայի, բարեկեցութեան եւ Խորհրդային կարգերի ամրացման: Այդպէս էլ կլինի:

Այժմ նայենք քաղաքին:

Քաղաքի բանւորութեան եւ աշխատաւորութեան

դրութեան բարելաւումը առաջ է գնում աւելի նպաստաւոր պայմաններում: Սրան վերաբերող տւեալները յայտնի են: Այդ առիթով շատ է գրւած, ուստի կարիք չկա սրա վրա ծանրանալու: Արժէ միայն մի քանի խօսք նւիրել որբերին ու որբանոցներին, կուլտուրական հիմնարկներին, հայ լեզւի ու գիտութեան արդի վիճակին եւ Ինտելիգենցիային:

ՈՐԲԵՐԸ

Ընդհանրապէս մեր երիտասարդութեան եւ մասնաւորապէս Կոմսոմոլի խնդիրները յարակից են, աւելի շուտ միացած են որբերի հարցին: Հայաստանը որոշ իմաստով որբերի երկիր է: Տասնեակ հազարներով որբեր են սնւում ու դաստիարակւում այնտեղ. հազարներով որբեր են պահւում եւ արտասահմանում: Սակայն ի՞նչ մեծ տարբերութիւն կա այդ հատւածների դրութեան մէջ: Այս տարւա Յունիսի 22 թւագրով Յունաստանի հայ որբերը «Տառապող որբութիւն» ստորագրութեամբ մի գրութիւն են բաց թողել՝ «Որբերու կոչ ընդհանուր հայութեան: Ճգնաժամը հասած է», որտեղ ասւած է. «Ստոյգ նամակներէ քաղւած տեղեկութեանց համաձայն, այլ եւ այլ կողմերու հայ որբուհիները 14էն վեր սկսած են յոյներու ծառայութեան տալ: Ահաւասիկ տխուր եւ ցնցող պարագա մը եւս, որ մեզ ալ զայրացում կը պատճառէ: Պահ մը ենթադրենք թէ մենք որբերս տանել կրնանք ամենէն յուսահատական վարկեանները իսկ, բայց, երբէք չէինք յուսար, թէ որբուհիներն ալ մեզի բաղդակիցներ պիտի ըլլան: Ողբի նամակներ են անոնք զոր գրած են մեզի այդ տարաբաղդ որբուհիները, աղերսելով ազատութիւն միայն»: Գրւածքում նկարագրւած է որբերի ծանր դրութիւնը որբանոցներում. վերջում կցւած է՝ «Անհանդուրժելի է այլեւս, պէտք է փրկել որբերը, փրկել որբուհիները, անոնցմէ պիտի կազմւի ապագա հայ սերունդը: Ահա վերջին կոչը կուղղենք ամբողջ հայ ազգին քանի դեռ չենք գլորւած անդունդը: Հասցուցէ՛ք ձեր ձեռքերը եւ փրկեցէ՛ք մեզ անդունդէն»: Միանգամայն պարզ եւ հասկանալի է այդ պատկերը գաղութներում ու բուրժուական երկրներում: Այժմ լսենք Հայաստանի որբերի ձայնը:

Հայաստանի որբերի փոքրիկ մասն է միայն սնւում պետական որբանոցներում, որոնց դրութիւնը նիւթական ու դաստիարակութեան տեսակէտից բաւարար է: Խո-

չորագոյն մասը գտնուում է ամերիկական որբանոցներում։ Վերջիններս իդեականի կողմից գտնուում են Խորհրդային Իշխանութեան լիակատար հսկողութեան ներքեւ։ Արդէն այդ որբանոցների համար երկրագործական համայնավայրեր են ստեղծուում։ Ամերիկական որբանոցների ընդհանուր վերահսկիչ Ե. Եարրօի՝ Ամերիկայի եւրոպական ներկայացուցչին (Զուիցերիայում) այս տարուա սեպտեմբերի գլխին ուղղած նամակում, ի միջի այլոց, ասուած է. «Կառավարութիւնը (արդի Հայաստանի Ա. Մ.) յղացել է մի քանի սքանչելի ծրագիր հողերի ոռոգման վերաբերեալ, մի քանիսն արդէն իրագործուում են, իսկ միւսները, որոնց յաջողութիւնն անպայման է, միջոցների սղութեան պատճառով յետաձգուում են։ Կառավարութիւնը յանձնել է ամերիկական կոմիտէյին որոշ քանակով հող, որը կառավարութեան հսկողութեան տակ պիտի բաժանուի որբերին։ Այլ երկրներից Հայաստան տեղափոխուելիք երեխաների հարցը միանգամայն այլ կերպ է դրուած, քանի որ նրանք ոչ թէ միայն ապահովուած են լինելու նիւթականապէս, այլ եւ անհրաժեշտ է ունենալ միջոցներ հողի մշակութեան համար, որոնք պէտք է յատկացուեն որբերին»։ Այսպէս խօսքը վերաբերում է արտասահմանից Հայաստան փոխադրուելիք որբերին։ Ինչպէս յայտնի է, այդ խնդիրն այսօր շատ է զբաղեցնում հայկական մի քանի գաղութների։ Այդպէս ուրեմն, ամերիկացին լաւ է ըմբռնել, որ Խորհրդային Իշխանութիւնը որբերին ցանկանում է դարձնել հողագործ, արհեստաւոր ու գործունեա քաղաքացիներ։ Այդ ուղղութեամբ է տարուում աշխատանքն ամերիկական որբանոցներում։ Անշուշտ, այնտեղ մթնոլորտը դեռ եւս այն չէ, ինչ որ մենք տեսնում ենք խորհրդային որբանոցներում։ Եւ այս հարցն է, որ մեզ անհանգստացնում է։

ԿՕՄՍՕՄՕԼԻՍՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔՈՒՄ

Պէտք է կրթել մօտ երեք տասնեակ հազար երեխաներ։ Նրանք մեր յոյսն են, մեր պետութեան հիմքերից մէկը։ Դա կոմսօմօլիստական խնդիրն է քաղաքում։ Չէ՞ որ մեզ հարկաւոր են սոցիալիստ քաղաքացիներ, հալալ աշխատաւորներ եւ ոչ թէ ազգայնական ու կղերական սեմինարիստներ եւ հակայեղափոխական գիմնազիստներ։ Տուաը բռնել ենք եւ պահում ենք, պէտք է որ գիծն էլ լաւ ու կարգին տանինք։ Դա մեր Լուսաւորութեան Կոմիսսարիատի գործն է ամենից առաջ, կոմսօմօլինը էապէս եւ կուսակցութեանը վերջին հաշուով։

ԿՈՒԼ՚ՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայաստանի քաղաքներն ունեն իրանց մի շարք կուլ՚տուրական գործօնները՝ լրագրեր, գիրք, թատրոն, թանգարան, գրադարան, կօնսերվատօրիա, համալսարան եւայլն, եւայլն։ Ո՛չ մի ժամանակ հայն այդպիսի պատկեր չի տեսել։ Առանց տատանուելու պէտք է ասած, որ Հայաստանը կուլտուրայի նոր դարաշրջան է ապրում։ Հայ լեզուն այսօր մեծ յարգ ունի։ Նա լսւում եւ գործածուում է ինչպէս կուլ՚տուրական հիմնարկութիւններում, պետական օրգաններում, նոյնպէս եւ տանը, փողոցում։ Դաշնակցական իշխանութիւնն ի՞նչ լեզու է գործածելիս եղել։ Դժուար է ասել։ Դաշնակցականները հայ լեզուի տարածման ու զարգացման օգտին չեն աշխատել, մինչդեռ այժմ այդ լեզուն յարմարուում է ե՛ւ գործնականին, ե՛ւ տեխնիկային, ե՛ւ գիտութեանը։ Նորագոյն, գիտական եւ բժշկական հայ բառարաններ են տպագրուում։ Առաջները եղե՞լ են միթէ քիմիայի, մարդակազմութեան, պատմագիտայի, հանքաբանութեան եւ այլն հայերէն դասագրքեր ու համալսարանական դասընթացքներ։ Այսօր դա իրականութիւն է։

Լեզուի հետ միասին զարգանում է ե՛ւ գիտութիւնը։ Հայկական գիտութեան մասին չենք խօսում։ Հայերէն գիտութիւնն է, որ այսօր ծաղկում է Հայաստանում. իսկ այդ գիտութեան արդիւնքներն կստացուեն ապագայում։ Հայաստանը ունի եւ գիտութեան տաճար։ Դա Երեւանի պետական համալսարանն է, որ հազարի մօտ ուսանողութիւն ունի եւ եօթանասունի մօտ գիտնական ուսուցիչներ է համախմբել իր շուրջը։ Մենք արդէն չեշտեցինք, որ կուլ՚տուրայի բարիքները պէտք է տարածել գիւղում. չպէտք է միայն ոգեւորուել ու տարուել քաղաքի կուլ՚տուրայով։ Այն, ինչ որ կա, դա էլ արդէն բաւական է։ Եղած թանգարաններն եւ գրականութիւնը պէտք է յայն կերպով օգտագործել գիւղում եւ գիւղի համար։ Մեր առօրեա մամուլը խստիւ պէտք է տարածել գիւղում. դրա համար անհրաժեշտ է կանոնաւորել փոստը, երթեւեկութիւնը եւ թերեւս կարեւոր է գրական շրջիկների ինստիտուտ մրցնել Հայաստանում։ Ցամենայն դէպս այս խոշոր հարցը պէտք է կապել գրագիտութեան տարածման խնդրին։ Սա

ժողովրդական Լուսաւորութեան Կոմիսարիատի գործն է: Եթէ թերթն ու գիրքը ժողովրդական լայն մասսաների սեփականութիւնը չի դառնում, ապա նրանց հրատարակելը միտք չունի:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Սակայն մեր կուլ՝տուրայի կենտրոնն է կազմելու Պետական համալսարանը Երեւանում: Նրա համար միջոցներ չպէտք է խնայել, ինչպէս եւ գրագիտութեան տարածման համար: Սրանք համարժէք եւ կենսական մեծութիւններ են: Որովհետեւ համալսարանն այն հնոցն է ու լաբորատորիան, որից կենսատու ճառագայթներ են ցրւում դէպի ծայրերը: Գիրն ու ընթերցանութիւնը տարածելու համար՝ պէտք են լուսաւոր գլուխներ, որ կտա համալսարանը: Հողի մշակութիւնը պահանջում է դաշտագէտներ, որոնց ստեղծելու է դարձեալ համալսարանը: Արդիւնաբերութիւնն ու արհեստը չեն կարող բարգաւաճել առանց ճարտարապետի, որին նոյնպէս կդաստիարակի համալսարանը: Ընդհանուր կուլ՝տուրայի զարկերակը բանելու է շարունակ եւ անընդհատ, եթէ առողջ պահի սիրտը: Համալսարանն այդ սիրտն է: Նա չափանիշն է լինելու հայկական կուլ՝տուրայի, նրա մշակոյթի եւ նրանց երկի կանոնաւոր զարգացման: Համալսարանը կստեղծի նոր ինտելիգենցիա բառի իսկական իմաստով. նա կինտելիգենցանի ողջ երկիրը: Իսկ առանց այս հանգամանքի կդժուարանա, նոյնիսկ անկարելի կդառնա սոցիալիստական կարգերի զարգացումը. չէ՞ որ սոցիալիզմը մի ամբողջ, մի նոր, մի կատարեալ կուլ՝տուրա է:

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ

Նման հին ու նոր գիւղի կա հին ու նոր ինտելիգենցիա: Հին ինտելիգենցիա է ուէրէրը, վարժապետը, դաշնակցական մտաւորականը, ազգայնական գրականագէտը: Նրա դարն անդարձ անցել ու գնացել է: Գալուստ եարկաւագները, Աղբալեանները, Վարանդեաններն ու Քալանթարեաններն այլեւս չկան: Նորն է գալիս, նորն է արշաւում: Դա երիտասարդ «Մուրճն» է եւ յեղափոխական Զարենցը. դա նոր կուլ՝տուրայի պահապան Մըռաւեանն է. մեր գիտնականներ ու գրականագէտներ՝ Ա. Ցովհաննիսեան, Կարինեան, Հ. Ցովհաննիսեան եւ ուրիշներն են: Մեզ հետ են եւ հին ինտելիգենցիայի լաւագոյն տարրերը: Սրանք են, որ կրթնած մասսաներին, նրանց անյողդողդ կամքին, նրանց հետ միասին նոր երգ են ասում, նոր ձեւով հող են մշակում, նոր աշխարհ են շինում:

Սա՛ է Հայաստանի ներկան: Սրա՛նք են նրա գործերը: Այսպիսի աւեալներով է նա առաջ գնում:

Երեք տարի: Արար աշխարհի առաջ բաց է այդ տարիների կեանքը: Կան այնտեղ եւ սխալներ: Հայաստանի բանւորներն ու գիւղացիները նկատում են այդ սխալները եւ ըստ այնմ ուղղում գիծը եւ գործին առողջ ընթացք տալիս: Ցամենայն դէպս մեր աշխատաւորութեան մահացու թշնամիներին եւ երկրից վտարուածներին չէ վերապահած այդ մասին խօսելու: Նրանց կանչն ու աղաղակը մեզ չեն վրդովում: Հայ աշխատաւորութիւնը կգնա իր ընտրած ուղիով:

Այսօր մենք ունենք Խորհրդային Հայաստան: Նրա կամակատարն է արդի կառավարութիւնը: Յեղափոխական հայ պետութիւնը՝ դա մի ամբողջ դարագլուխ է: Մարդիկ արտասահմանում հաշում են, թէ չկա հայկական անկախութիւնը, իսկ իրականութիւնը յամառօրէն պնդում է որ արդի Հայաստանն ազգային խորհրդային պետութիւն է, ինքնուրոյն պետութիւն, հայկական լեզուով, հայ կուլ՝տուրայով, զարգացող եւ հայի կեանքն ազնւացնող մի պետութիւն:

ԵՐԵՔ ՏԱՐԻ

Երեք տարի է ահա՛, ինչ նա կանգուն, անխախտ ու խրոխտ նայում է ապագային, ձեռքում բռնած պրոլետարական զէնքը, իր յաղթութիւնները չալակին եւ պատրաստ նորանոր կռիւների ու նւաճումների: Դաշնակցական Հայաստանը հնի, կապիտալիզմի, ցարական կարգերի չարունակութիւնն էր կազմում: Խորհրդային Հայաստանը նոր աշխարհ է, չտեսնւած ու չեղած: Նախկին Հայաստանը դիակ էր եւ մոխիր դարձաւ: Յեղափոխական Հայաստանը կեանք է եւ առաջդիմութիւն: Թող պահպանողականները, սեւամիտները ու ոճրագործ սպասաւորները, թրիւ զալով մեռնող Եւրպայի սրճարաններում, խռպոտ ոռնոցով դիմաւորեն Հայաստանի նոր կեանքը: Նա կա, նա զարգանում է Կոմմունիստական Կուսակցութեան ղեկավարութեամբ. նա ամուր քայլերով գնում է

807.

դէպի լուսաւոր ապագան։ Որովհետեւ այդպէս են ուզում հայ բանւորն ու աշխատաւոր գիւղացին։ Դա նրանց գործն է։

Ողջո՛յն Յեղափոխական Պրոլետարիատին ու Գեղջուկին։

Ողջո՛յն երեք տարին բոլորող Սոցիալիստական Հայաստանին։

(ԱՇԽԱՏԱՎՈՐԱՅԻՆ ՕՐԱԳՐԱԳԻՐ)

Հանրային Գրադարան С.С.Ս.Հ. Публичная Б
7/XI-1922
Ս. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Բ Ա Ռ Ա Գ Ի Ր ք

Արտել — Հնուց Ռուսիոյ մէջ գոյութիւն ունեցող աշխատանքային ընկերակցութիւն, որ յաճախ համայնական տնտեսելակերպի ձեւն առած է. կկոչի նաեւ դրուժինա.

Լաբօրատօրիա — Աշխատանոց.

Կոնուս — Երկրաչափութեան մէջ մարմին մը, որ շաքարի գնդի ձեւն ունի.

Կոմսոմոլ — Կոմունիստ Երիտասարդական Միութիւն.

Մեշչանիզմ — Բաղքէնիութիւն.

Սիսմօնդի — Ֆրանսացի պատմաբան եւ տնտեսագէտ (1773–1842)։ Առաջ Ադամ Սմիթի վարդապետութեան հետեւող էր. յետագային անգլիական տնտեսագէտներու հակառակ վարդապետութիւններ քարոզեց։

Սմայլսիզմ — Սմայլսի գրուածքների մտայնութիւնը ներկայացնող.

Փեշակ — արհեստ, պարապմունք.

Ֆիզիօկրատիզմ — Տնտեսագիտական վարդապետութիւն մը, որ 18դդ դարու կիսին առաջացաւ Ֆրանսիոյ մէջ եւ հողը ու հողամշակութիւնը ազգային հարստութեան գլխաւոր աղբիւրը կհամարէր.

Ֆօկուսնիկութիւն — Ձեռնածութիւն.

ՀՀ Ազգային գրադարան
NL0393870

13028